Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-1187-11.11.2025-ՏՏԳՇ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2001 թվականի մայիսի 2-ի Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 63-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ «էլեկտրոնային աճուրդով (այսուհետ՝ Աճուրդ)»:

Հոդված 2. Օրենսգրքի 67-րդ հոդվածում.

1. 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Աճուրդով վաճառքի մեկնարկային գինը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հողամասի գնահատված շուկայական արժեքը՝ կառավարության սահմանած կարգով:».

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1 Աճուրդով օտարման ենթակա հողերի աճուրդի կազմակերպման ու անցկացման լրացուցիչ պայմանները սահմանում է կառավարությունը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 68-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Հոդված 68. Աճուրդի կազմակերպումը

1. Աճուրդը, բացառությամբ սույն օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերի, կազմակերպում է համայնքի ղեկավարը էլեկտրոնային համակարգի միջոցով՝ կառավարության սահմանած կարգին համապատասխան:»:

Հոդված 4. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի ընդունումից հետո երեք ամսվա ընթացքում:

Տեղեկանք
փոփոխվող հոդվածների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «2001 թվականի մայիսի 2-ի Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք» 2001 թվականի մայիսի 2-ի ՀՕ-185 օրենքիօրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 63-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ «էլեկտրոնային աճուրդով (այսուհետ՝ Աճուրդ)»:

Հոդված 2. Օրենսգրքի 67-րդ հոդվածում.

1. 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2. Աճուրդով վաճառքի մեկնարկային գինը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով հողամասի գնահատված շուկայական արժեքը՝ Կառավարությունկառավարության սահմանած կարգով:».

2. լրացնել հետևյալ բովանդակությամբ 2.1-ին մասով.

«2.1 Աճուրդով օտարման ենթակա հողերի աճուրդի կազմակերպման ու անցկացման լրացուցիչ պայմանները սահմանում է Կառավարությունը կառավարությունը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 68-րդ հոդվածը լրացնել շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«**Հոդված 68. Աճուրդի կազմակերպումը**

1.1 Աճուրդը, բացառությամբ սույն օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերի, կազմակերպում է համայնքի ղեկավարը էլեկտրոնային համակարգի միջոցով՝ Կառավարության կառավարության սահմանած կարգին համապատասխան:»:

Հոդված 4. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ մտնելու պահից:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են սույն օրենքի ընդունումից հետո երեք ամսվա ընթացքում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ « ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1187-11.11.2025-ՏՏԳԾ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ Կառավարություն	**«Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդված**	Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս առաջարկում ենք պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջը առ այն՝ «Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի վերնագիրը եւ «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			Հետևաբար առաջարկում ենք նախագծի 1-ին հոդվածում ««Հայաստանի Հանրապետության հողային օրենսգիրք» 2001 թվականի մայիսի 2-ի ՀՕ-185 օրենքի» բառերը փոխարինել «2001 թվականի մայիսի 2-ի Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի» բառերով:		
2.	ՀՀ Կառավարություն	«**Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի ամբողջ տեքստ**	«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Նորմատիվ իրավական ակտում միեւնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միեւնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ»: Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք Նախագծի 2-րդ հոդվածով նախատեսվող Օրենսգրքի 67-րդ հոդվածում նոր խմբագրությամբ շարադրվող 2-րդ մասում, նոր լրացվող 2.1-ին մասում եւ 68-րդ հոդվածում կիրառել «կառավարության» ձեւակերպումը՝ համապատասխանեցնելով այն Օրենսգրքում կիրառվող ձեւին:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

3.	ՀՀ կառավարություն	«**Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերնագիր**	Քանի, որ Նախագծով նախատեսվում է իրականացնել մեկ լրացում՝ առաջարկվում է **նախագծի վերնագրում «լրացումներ» բառը փոխարինել «լրացում» բառով:**	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունները:	Ընդունվել է:
4.	ՀՀ կառավարություն	**Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ հոդված**	Առաջարկում ենք Օրենսգրքի 68-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ, քանի որ այնտեղ առկա կարգավորումները վերաբերելի են դասական աճուրդներին և էլեկտրոնային աճուրդ կազմակերպելիս կարող են շփոթություն առաջացնել: Հետևաբար, առաջարկում ենք Նախագծի 3-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ՝ ***«Հոդված 3.*** Օրենսգրքի 68-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 68. Աճուրդի կազմակերպումը	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է:

			1. Աճուրդը, բացառությամբ սույն օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերի, կազմակերպում է համայնքի ղեկավարը էլեկտրոնային համակարգի միջոցով՝ կառավարության սահմանած կարգին համապատասխան:»:		
5.	ՀՀ կառավարություն	«Գնահատման գործունեության մասին» օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	«Գնահատման գործունեության մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել « Հայաստանի Հանրապետություն» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջները:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	Ընդունվել է: